ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 դեկտեմբերի 2025 թվականի № 486-Ա

ԼԵՎՈՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի նոյեմբերի 5-ի № 487 որոշման 1-ին կետի «բ» ենթակետը և *Լևոն Պետրոսյանի* 2025 թվականի դեկտեմբերի 2-ի № Ն/1592-2025 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար ***Լևոն Պետրոսյանին*** տրամադրել 2025 թվականի աշխատանքային տարվա պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների օգտագործման ու այդպիսի գաղտնիքի պաշտպանության աշխատանքների համար լրացուցիչ վճարովի արձակուրդը՝ հինգ աշխատանքային օր՝ 2025 թվականի դեկտեմբերի 30-ից 2026 թվականի հունվարի 9-ը ներառյալ:

2. ***Լևոն Պետրոսյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ ***Վահագն Նազլոյանի*** վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ԱԼԱՎԱԿՅԱՆ**

2025 թվականի դեկտեմբերի 8
ք. Հրազդան